ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-ԻՆ, ԺԱՄԸ 11-00-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝ Առնակ Ավետիսյանի
- Արաքս համայնքի ղեկավար՝ Ղազար Ղազարյանի
- Խոյ համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանի
- Փարաքար համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանի
- Բաղրամյան համայնքի ղեկավար՝ Շանթ Առաքելյանի
- Ֆերիկ համայնքի ղեկավար՝ Ռուստամ Հասանյանի
- Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արսեն Պետրոսյանի
- Արմավիր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարշամ Սարգսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Սաթենիկ Թովմասյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի խորհրդական՝ Ֆելիքս Պողոսյանի
- ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ՝ Արթուր Բդոյանի
- ՀՀ ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության պետ՝ Ռաֆիկ Բոխյանի
- ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ Հովհաննես Մարգարյանի
- ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիր>> ՋՕԸ–ի ներկայացուցիչ՝ Արշավիր Հայրապետյանի
- ՀՀ Արմավիրի մարզի <<Շենիկ >> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն՝ Սամվել Սարգսյանի
- ՀՀ Արմավիրի մարզի <<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն՝ Նվեր Պետրոսյանի
- ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների
- Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Էդվարդ Հովհաննիսյան-
Հ Հ Արմավիրի մարզպետ/

2.Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում ապաստանած արցախցիներին միջազգային կառույցների, հասարակական և/կամ բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարեգործների կողմից տրամադրվող օժանդակության բաշխումն արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ

/Արսեն Պետրոսյան-
Հ Հ Արմավիրի մարզի Վաղարշապատ
համայնքի ղեկավարի տեղակալ/

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և 2024 թվականին իրականացվելիք մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագրի մասին

/Լիաննա Հարությունյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ/

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2023 թվականի արդյունքների մասին, առ 20.12.2023թ. դրությամբ

/Վարազդատ Մկրտչյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
ֆինանսական վարչության պետ/

5. Պետական բյուջեով 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին հատկացված միջոցներով սուբվենցիոն ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփում և 2024 թվականի սուբվենցիաների հայտերի ներկայացման, ինչպես նաև սուբվենցիաների տրամադրման կարգում կատարված փոփոխությունների մասին

/Լիլիթ Մուշեղյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ/

6. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից օրենքով սահմանված կարգով Արմավիրի մարզպետի աշխատակազմում և մարզի համայնքապետարաններում պետական բյուջեից տրամադրված բյուջետային միջոցների նկատմամբ ֆինանսական, այդ թվում ստուգումների միջոցով անհրաժեշտ վերահսկողության կազմակերպման արդյունքների մասին

/Աշոտ Հովհաննիսյան–
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ /

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2023 թվականի ընթացքում ոռոգման համակարգերը սպասարկող ընկերությունների կողմից կատարված աշխատանքների, հիմնախնդիրների և գյուղատնտեսական մթերքների /խաղող, պտուղ–բանջարեղեն/ մթերումների արդյունքների մասին

/Արթուր Այվազյան–
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ /

8. Հայտարարություններ՝

ա/ 2024 թվականի հունվարի 1–ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառում կատարելու վերաբերյալ

/Արթուր Այվազյան–
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գյուղատնտեսության և շրջակա միջավայրի
պահպանության վարչության պետ /

բ/ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում աղբահանության և սանիտարական մաքրության կազմակերպման որակի մասին

/Աշոտ Հովհաննիսյան–
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, ողջունելով նիստի մասնակիցներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված <<**Հայաստանի**

Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի նիստի օրակարգը հաստատելու մասին >> որոշման նախագիծը:

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի խորհրդի

Որոշումը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 22–ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N 647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 22–ի նիստի օրակարգը:

   Օրակարգային՝ << **Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում ապաստանած արցախցիներին միջազգային կառույցների, հասարակական և/կամ բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարեգործների կողմից տրամադրվող օժանդակության բաշխումն արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ**>> երկրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ Արսեն Պետրոսյանը, նշելով, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում ապաստանած արցախցիներին միջազգային կառույցների, հասարակական և/կամ բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարեգործների կողմից տրամադրվող օժանդակության բաշխումը մինչև օրս կազմակերպվել է բացառապես համայնքապետարանների համապատասխան ոլորտի պատասխանատու աշխատակիցների միջոցով:

Խնդիրն այն է, նշեց նա, որ միջազգային կառույցների, հասարակական և/կամ բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարեգործների կողմից տրամադրվող օժանդակությունը, մասնավորապես Վաղարշապատ համայնքի պարագայում, քանակապես չի բավարարում համայնքում բնակություն հաստատած Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բոլոր ընտանիքներին հատկացնելու համար: Տվյալ պարագայում, երբ բաշխումն իրականացնում է համայնքապետարանը, շահառուն աջակցությունն ընկալում է որպես պետության կողմից տրամադրվող օժանդակություն և, ելնելով այն հանգամանքից, որ ոչ բոլոր ընտանիքների թվով է տրամադրվում աջակցությունը առաջանում են դժգոհություններ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Ընդ որում, հարկ համարեց նշել նաև, որ միջազգային կառույցների, հասարակական և/կամ բարեգործական կազմակերպությունների ու անհատ բարեգործների կողմից համայնքին չի տրամադրվում անգամ բաշխման գործընթացի ձևաչափ՝ հաճախ չնշելով անգամ շահառուների շրջանակ: Սա ևս հավելյալ ծանրաբեռնվածություն է ստեղծում երևի մարզի գրեթե բոլոր համայնքապետարաններում ոլորտի պատասխանատու աշխատակցիների համար:

Բաշխման ամբողջ բեռը, դրա ավարտից հետո նաև առաջացած բողոքի ողջ ալիքն ուղղվում է համայնքապետարանին, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարի տեղակալ Արսեն Պետրոսյանը կրկին անգամ վերահաստատելով՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքներին աջակցելու իրենց պատրաստակամությունը, և ելնելով նշված գործընթացին առնչվող աշխատակիցների դիտարկումներից, առաջարկեց միջազգային կառույցների, հասարակական և/կամ բարեգործական կազմակերպությունների կողմից Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքներին աջակցելու ծրագրերն իրականացնել համայնքում բնակություն հաստատած ընտանիքների վերաբերյալ համայնքի կողմից տրամադրված համապատասխան տեղեկատվություն պարունակող /ընտանքիների անձանց թիվ, կոնտակտային տվյալներ, այլ տեղեկատվություն/ ցուցակների հիման վրա՝ բաշխման բուն գործընթացը թողնելով աջակցության ծրագրեր իրականացնող հասարակական

կազմակերպություններին և/կամ միջազգային կառույցներին:

Մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, կարևորելով ստացված աջակցությունների բաշխման գործընթացում սոցիալական արդարության պահպանման սկզբունքը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ այսուհետ աջակցությունների բաշխման գործընթացում առաջացած խնդիրները նախապես քննարկել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդական Սաթենիկ Թովմասյանի հետ և համագործակցված աշխատանքով տալ հնարավոր լուծումներ:

Օրակարգային՝ << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և 2024 թվականին իրականացվելիք մարզի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային ծրագրի մասին** >> երրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը: Նա նիստի մասնակիցներին իրազեկեց, որ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի N3245-Ա հրամանով հաստատված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագրի համաձայն, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի հուլիսի 27-ի ՆՄՈ/330-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2023 թվականի երրորդ եռամսյակում իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն, որի արդյունքում կազմված համապատասխան փաստաթղթերը՝ արձանագրությունը և հարցաշարը, սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում՝ http://armavir.mtad.am/:

Աշխատանքային խմբի կողմից իրավական և մասնագիտական հսկողությունն

իրականացվել է «Տեղական ինքնակառավարման մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: Արաքս համայնքում 3-րդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքներով արձանագրված խախտումների և թերությունների վերացման առումով պայմանավորվածություն է ձեռք բերվել դրանք իրականացնել 2024 թվականի մինչև 1-ին եռամսյակի ավարտը:

Մասնավորապես՝ որոշ գործոններ հաշվի առնելով՝

1.Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը նախատեսվել է համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել 2024 թվականի ավագանու 1-ին նստաշրջանի ընթացքում՝ սկսած փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից:

2.Համայքի Ապագա, Մեծամոր, Արաքս և Ակնաշեն բնակավայրերում բնակչության ազդարարման համար էլեկտրաշչակների ձեռք բերման գործընթացը կիրականացվի 2024 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում (դրանց գնման համար անհարժեշտ ֆինանսական միջոցները կնախատեսվեն համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեով):

3.«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված և որպես թերություն արձանագրված պարտավորությունների կատարումը համայնքի ղեկավարի հավաստմամբ ամբողջությամբ կավարտվեն 2024 թվականի մինչև 1-ին եռամսյակի ավարտը:

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2530-Ա հրամանով հաստատվել է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2024 թվականի աշխատանքային ծրագիրը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում հսկողության ժամկետները սահմանված են 1-3-րդ եռամսյակներում՝ համապատասխանաբար՝ Վաղարշապատ, Արմավիր և Բաղրամյան համայնքներում:

Մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, անհրաժեշտ համարելով Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Արաքս համայնքում իրավական և մասնագիտական հսկողության իրականացման ընթացքում արձանագրված թերությունների վերացումը, համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանին առաջարկեց՝ գործնական միջոցներ ձեռնարկել սահմանված ժամկետում արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ:

Օրակարգային՝ << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման 2023 թվականի արդյունքների մասին,առ 20.12.2023թ. դրությամբ**>> չորրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վարազդատ Մկրտչյանը, որն իր զեկուցման մեջ մասնավորապես նշեց, որ 20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից ընդամենը եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 14094543,5 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 11711228,2 հազ. դրամի համեմատ. ավել է պլանավորվել 2383315,3 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 14071056,5 հազ. դրամ , 30.12.2022 թվականին հավաքագրված 11441798,6 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 2629257,9 հազ. դրամով, կատարվել է 99,8%-ով, նախորդ տարվա 97,7%-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրումը պլանավորվել է 4704634,7 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 4266443,8 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 438190,9 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 4813525,6 հազ. դրամ , 30.12.2022թ թվականին հավաքագրված 4353525,9 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 459999,7 հազ. դրամով, կատարվել է 102,3%-ով, նախորդ տարվա 102,0%-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից անշարժ գույքի հարկի հավաքագրումը պլանավորվել է 1173919,7 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 1061086,4 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 112833,3 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը

կազմել է 1087460,3 հազ. դրամ , 30.12.2022 թվականին հավաքագրված 1116477,9 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 29017,6 հազ. դրամով, կատարվել է 92,6%-ով, նախորդ տարվա 105,2%-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից փոխադրամիջոցների գույքահարկի հավաքագրումը պլանավորվել է 1818251,9 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 1697885,7 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 120366,2 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 1867599,5 հազ. դրամ , 30.12.2022թ թվականին հավաքագրված 1640807,6 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 226791,9 հազ. դրամով, կատարվել է 102,7%-ով, նախորդ տարվա 96,6 %-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 198769,9 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 170869,0 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 27900,9 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 242838,7 հազ. դրամ , 30.12.2022 թվականին հավաքագրված 209254,1 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 33584,7 հազ. դրամով, կատարվել է 122,2%-ով, նախորդ տարվա 122,5 %-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից պետական տուրքերի գծով հավաքագրումը պլանավորվել է 80600,0 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 71800,0 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 8800,0 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 94772,7 հազ. դրամ, 30.12.2022 թվականին հավաքագրված. 89553,8 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 5218,9 հազ. դրամով, կատարվել է 117,6%-ով, նախորդ տարվա 124,7%-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից հողի և գույքի վարձակալության գծով հավաքագրումը պլանավորվել է 186303,0 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 185985,5 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 317,5 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 211355,4 հազ. դրամ , 30.12.2022 թվականին հավաքագրված

213669,1 հազ. դրամի համեմատ, պակաս է հավաքագրվել 2313,7 հազ. դրամով, կատարվել է 113,4%-ով, նախորդ տարվա 114,9%-ի համեմատ:

20.12.2023 թվականի համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների կողմից տեղական վճարների գծով հավաքագրումը պլանավորվել է 984785,3 հազ.դրամ՝ 30.12.2022 թվականին պլանավորված 824144,7 հազ. դրամի համեմատ ավել է պլանավորվել 160640,6 հազ. դրամով, 20.12.2023թ. դրությամբ փաստացի հավաքագրումը կազմել է 932036,2 հազ. դրամ , 30.12.2022 թվականին հավաքագրված 792215,7 հազ. դրամի համեմատ, ավել է հավաքագրվել 139820,4 հազ. դրամով, կատարվել է 94,6%-ով, նախորդ տարվա 96,1%-ի համեմատ:

Մտքերի փոխանակմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը, հաշվի առնելով նաև այն, որ տարին դեռևս չի ավարտվել, սեփական եկամուտների հավաքագրման շարունակական գործընթացի արդյունքներն ընդհանուր առմամբ դրական գնահատելով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների ուշադրությունը հրավիրեց միայն բարձր ցուցանիշներ ապահովելու անհրաժեշտության վրա, քանի որ այդ ցուցանիշների ապահովումից է կախված համայնքներում տարբեր սուբվենցիոն ծրագրերի իրականացման երաշխիքը: Միաժամանակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը սեփական եկամուտների հավաքագրման գործընթացում ցածր ցուցանիշներ ապահովելու համար հատկապես նշեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքի ղեկավար Ռուստամ Հասանյանի կատարողական վատ աշխատանքը, առաջարկելով նրան փոխել գործելաոճը և գործնական մոտեցմամբ ակտիվացնել տարվող աշխատանքները համայնքի առջև ծառացած խնդիրների լուծման ուղղությամբ:

Օրակարգային՝ <<**Պետական բյուջեով 2023 թվականին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզին հատկացված միջոցներով սուբվենցիոն ծրագրերի իրականացման արդյունքների ամփոփում և 2024 թվականի սուբվենցիաների հայտերի ներկայացման, ինչպես նաև սուբվենցիաների տրամադրման կարգում կատարված փոփոխությունների մասին**>> հինգերորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը: Նա հանգամանորեն

ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում իրականացված,իրականացվող և իրականացվելիք սուբվենցիոն ծրագրերը:

<u>Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորումը</u>

2023թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարության թվով 12 որոշումներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին սուբվենցիոն ծրագրերի պետական բյուջեի հատկացումը կազմում է ընդամենը **2,606,287,500** Հայաստանի Հանրապետության դրամ (7 միավորված համայնքների 63 բնակավայրերի 118 ենթածրագրերի համար): Ցուցանիշը գերազանցում է 2022թ. ցուցանիշը՝ շուրջ 1 մլրդ 138 մլն դրամով:

Համայնքապետարանների կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ ներկայացված օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա **2023թ. դեկտեմբերի 21-ի** դրությամբ կատարվել է պետության մասնաբաժնի ֆինանսավորում՝ **<u>2 մլրդ 388 մլն</u>** դրամ, որը ավել է 2022թ. ցուցանիշից՝ շուրջ **<u>1 մլրդ 22 մլն</u>** դրամով: Գործընթացը կշարունակվի մինչև բյուջետային տարվա վերջին օրը:

Շարունակվում է սուբվենցիոն ծրագրերի կառավարության մասնաբաժնի հատկացման փաթեթների ներկայացման գործընթացը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, այդ ծրագրերի ֆինանսավորումն արդեն կլինի 2024 թվականի ընթացքում: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է, որ համայնքապետարանների կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ առանց ուշացումների ներկայացվեն վճարման ներկայացվող փաստաթղթերի փաթեթները (դրանք են՝ շինարարությունն ավարտված սուբվենցիոն ծրագրերի համայնքային մասնաբաժնի վճարման, ինչպես նաև կառավարության մասնաբաժնի հատկացման համար օրենսդրությամբ նախատեսված ծախսը հիմնավորող բոլոր փաստաթղթերը): Այս պահին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ուղարկված 9 ենթածրագրի փաթեթներ, որոնց կառավարության մասնաբաժինը կազմում շուրջ 316.3 մլն դրամ:

21.12.2023թ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացել ենք հանձնարարական՝ սուբվենցիայի ծրագրի շրջանակներում մինչև 2023 թվականի բյուջետային տարվա վերջ

չավարտվող ծրագրերի վերաբերյալ: Մասնավորապես՝ 2022 և 2023 թվականներին հավանության արժանացած, սակայն մինչև 2023 թվականի տարեվերջ չավարտվող սուբվենցիայի ծրագրերը 2024 թվական տեղափոխման համար համապատասխան շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագրերում փոփոխություններ կատարելու թույլտվություն տալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի քննարկման նպատակով՝ ներկայացվել է 2024 թվական տեղափոխման ենթակա ծրագրերի ցանկը՝ ընդգրկված ծրագրերի ամբողջականությունը ստուգելու և այսօր ՏԿԵՆ ներկայացնելու համար: Պետք է հաշվի առնել, որ ցանկում չեն ներառվել այն ծրագրերը, որոնց կատարման համար դեռևս պայմանագրեր չեն կնքվել, ինչպես նաև այն ծրագրերը, որոնց դեպքում 2022 թվականին իրականացվել են գնման գործընթացներ, կնքվել պայմանագրեր, սակայն մինչ օրս ոչ մի աշխատանք չի կատարվել:

<u>2024թ. սուբվենցիոն ծրագրեր</u>

2024 թվականի սուբվենցիաներ ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 7 համայնքների 42 սուբվենցիոն ծրագրերի (153 ենթածրագրերով) նախնական հայտեր և տեխնիկական բնութագրեր:

Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է **9.62 մլրդ դրամ**, որից՝

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ **4.63 մլրդ դրամ,**
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ **4.97 մլրդ դրամ**,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ **13.13 մլն դրամ:**

Հայաստանի Հանրապետության կառավարության 16.11.2006թ. N 1708-Ն որոշմամբ սահմանված ժամկետում (մինչև ս.թ. դեկտեմբերի 5-ը) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 6 միավորված համայնքների 38 բնակավայրերի 16 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ՝ 84 ենթածրագրերով:

Կարգով սահմանված ժամկետում՝ 05.12.2023թ. դրությամբ, ըստ համայնքների պատկերն հետևյալն է.

	Առաջին փուլ			***Ամբողջական փաթեթների ներկայացման փուլ***			
Համայնքը	***ծրագրերի թիվ***	***բնակավայրերի /ենթածրագրերի թիվը***	***ծրագրի ընդհանուր արժեքը (I փուլ), ՀՀ դրամ***	***ծրագրերի թիվ***	***բնակավայրերի թիվը***	***ենթածրագրերի թիվը***	***ծրագրի ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ***
Արմավիր	5	9	1 768 310 000	1	1	1	107,778,340
Վաղարշապատ	1	1	516 000 000	1	1	4	720,758,936
Մեծամոր	7	43	2 225 000 000	8	20	47	2,239,408,859
Արաքս	13	35	1 399 679 189	2	5	5	193,886,186
Փարաքար	3	25	1 780 000 000	2	9	22	3,110,758,890
Բաղրամյան	7	30	1 104 335 000	2	2	5	169,878,650
Խոյ	6	10	826 800 000	0			
Ընդամենը	**42**	**153**	**9 620 124 189**	**16**	**38**	**84**	**6,541,805,061**

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ **2.87 մլրդ դրամ,**
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ **3.65 մլրդ դրամ**,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ **21.8 մլն դրամ:**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 06.12.2023թ. N 01/16/08813-2023 գրությամբ առաջարկություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ 2024 թվականի սուբվենցիոն

ծրագրերի ամբողջական փաթեթների ներկայացման ժամկետը երկարաձգելու հարցում աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ, սակայն դեռևս ժամկետի երկարացման հանձնարարական չի ստացվել:

22.12.2023թ.Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն **է ներկայացվել ևս 4 ամբողջական փաթեթ, Արաքս համայնքից՝ 3, Արմավիր համայնքից՝ 1:**

Արդյունքում, մարզի պատկերն հետևյալն է.

	Առաջին փուլ			***Ամբողջական փաթեթների ներկայացման փուլ***			
	ծրագրերի թիվ	***բնակավայրերի /ենթածրագրերի թիվը***	***ծրագրի ընդհանուր արժեքը (I փուլ), ՀՀ դրամ***	***ծրագրերի թիվ***	***բնակավայրերի թիվը***	***ենթածրագրերի թիվը***	***ծրագրի ընդհանուր արժեքը, ՀՀ դրամ***
Ընդամենը	42	153	9 620 124 189	**20**	**44**	**97**	**7,745,110,684**

- պետական բյուջեի մասնաբաժինը կազմում է շուրջ **3.3 մլրդ դրամ,**
- համայնքային բյուջեի մասնաբաժինը՝ շուրջ **4.4 մլրդ դրամ**,
- մասնավորի և բնակիչների ներդումը՝ **21.8 մլն դրամ:**

Ըստ ոլորտների պատկերն հետևյալն է.

Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/	1 ծրագիր / 2 ենթածրագիր	100.7 մլն դրամ	Մեծամոր համայնք՝ Նորապատ բն.	կառավարություն՝ 65%, համայնք՝ 35%

նորոգում				
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում	1 ծրագիր/ 9ենթ. լրացուցիչ՝ 1 ծրագիր/3ենթ	732.7 մլն 105 մլն ընդ.՝ 837.7 մլն	Փարաքար համայնք՝ բոլոր 9 բնակավայր, Արաքս համայնք՝ Արաքս, Առատաշեն, Լուսագյուղ բն.	կառավարություն՝ 65%, համայնք՝ 35%
Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում ասֆալտապատմամբ	4 ծրագիր/21 ենթ. լրացուցիչ՝ 2 ծրագիր/8ենթ	3.5 մլրդ 1 մլրդ ընդ.՝ 4.5 մլրդ դրամ	Վաղարշապատ Մեծամոր Արաքս Փարաքար Արմավիր	կառավարություն՝ 35%, համայնք՝ 65%, 2 ծրագիր՝ 55%-45% սահմանամերձ /նույնը/
Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում	1 ծրագիր/ 3ենթ.	72.1 մլն	Արաքս համայնք՝ Ջրառատ, Գայ, Ապագա բն.	կառավարություն՝ 45%, համայնք՝ 55% /նույնը/
Բնակավայրերի գազաֆիկացում	3 ծրագիր/ 24ենթ.	483.7 մլն	Արմավիր՝ ք.Արմավիր, Մեծամոր /2ծր./՝ նաև Բերքաշատ բն /1-ին անգամ/	կառավարություն՝ 45%, համայնք՝ 55% /նույնը/
Նախադպրոցական	1 ծրագիր/	650.4 մլն	Մեծամոր՝	կառավարություն՝

հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում	6ենթ.		քՄեծամոր, Տանձուտ, Տարոնիկ, Երասխահուն /կառուցում/, Ակնալիճ, Ջանֆիդա բն.	70%, համայնք՝ 30% /նույնը/
Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում	2 ծրագիր/ 11ենթ.	229.6 մլն	Մեծամոր՝ քՄեծամորի 11շենքեր Բաղրամյան՝ Դալարիկ բն.	կառավարություն՝ 35%, համայնք՝ 55%, բնակիչ՝ 10% /նույնը/ կառավարություն՝ 40%, համայնք՝ 55%, բնակիչ՝ 5% /նույնը/
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/ վերանորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում	2 ծրագիր/ 7ենթ.	651.7 մլն	Մեծամոր՝ քՄեծամոր, Մրգաշատ, Ալաշկերտ /մշ. տան կառուցում/ Բաղրամյան՝ Դալարիկ, Հուշակերտ	կառավարություն՝ 35%, համայնք՝ 65%, կառավարություն՝ 40%, համայնք՝ 60% /նույնը/
Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում	1 ծրագիր/ 1ենթ.	123.3 մլն 80 մլն	Մեծամոր՝ քՄեծամոր	կառավարություն՝ 30%, համայնք՝ 70%

	լրացուցիչ՝ 1 ծրագիր /2 ենթ.	ընդ.՝ 203.3 մլն	Արաքս՝ Գրիբոյեդով, Արտիմետ բն.	/նույնը/

Այնուհետև ներկայացվեց սուբվենցիաների տրամադրման կարգում կատարված դրական փոփոխությունների մասին՝ որպես օրինակ բերելով արդեն իսկ դրանց կիրարկումը համայնքների կողմից ներկայացված 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի հայտերում:

« Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ***կառավարության որոշումն ընդունվել է 02.11.2023թ-ին (N 1909-Ն որոշում)***

- **որոշման N 2 հավելվածը լրացվել է նոր կետով.**

3.1. Տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման նպատակով դիտարկվում են այն համայնքների հայտերը, որոնց նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը 90 տոկոս և ավելի է: Իսկ 90 տոկոսից ցածրի դեպքում՝ սուբվենցիայի հայտի դիտարկումը ենթակա է քննարկման սույն կարգի 12-րդ կետի 7.2-րդ ենթակետով սահմանված տեղեկանք-հիմնավորման հիման վրա:

- **որոշման N 2 հավելվածի 12-րդ կետը (սուբվենցիայի ամբողջական փաթեթը ներառում է՝) լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.3-րդ և 7.2-րդ ենթակետերով.**

5.3) նախադպրոցական հաստատությունների, հասարակական շենքերի և քաղաքացիական պաշտպանության ենթակառուցվածքների կառուցման ու վերակառուցման դեպքում՝ **դրանց շահագործման ու պահպանման ծախսերը համայնքային բյուջեում և միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառելու վերաբերյալ տեղեկանքը**.,

7.2) նախորդ տարվա հարկերի, տուրքերի և այլ վճարների հավաքագրման մակարդակը **90 տոկոսից ցածր լինելու դեպքում՝ տեղեկանք-հիմնավորումներ** նշված հարկատեսակների թերհավաքագրման պատճառների և դրանց վերացմանն ուղղված ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ:

- **որոշման N 2 հավելվածի 24-րդ կետի աղյուսակում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝**

Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում 65-75%	1 ծրագիր	Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 2-րդ և 9-րդ փողոցների կոյուղու կառուցում, Նորապատ բնակավայրի 2-րդ, 9-րդ փողոցների և 9-րդ փողոցի 1-ին նրբանցքի ջրագծերի փոխարինում	Կառավարություն 65%, համայնք - 35% <u>նախորդ՝ 60% - 40% փոխարեն</u>
Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում 65-75%	1 ծրագիր /9 ենթ. լրացուցիչ՝ 1 / 3ենթ.	1.Փարաքար համայնքի Այգեկ, Նորակերտ, Արևաշատ, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Թաիրով, Բաղրամյան, Փարաքար բնակավայրերում ոռոգման ցանցի ընդլայնում, 2.Արաքս համայնքի Արաքս գյուղի ոռոգման համակարգի կառուցում, Առատաշեն գյուղի	Կառավարություն 65%, համայնք - 35% <u>նախորդ՝ 60% - 40% փոխարեն</u>

		ոռոգման ցանցի կառուցում և Լուսագյուղ գյուղի ոռոգման ցանցի կառուցում	
Ներհամայնքային (տեղական նշանակության) փողոցների ու մայթերի կառուցում/ վերակառուցում, հիմնանորոգում, բնական քարով (այդ թվում՝ չմշակված) սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների ու տարրերի կիրառմամբ 55-75%	ծրագիր չի ներկայացվել		Նախկին 50-70%
Ներհամայնքային (տեղական նշանակության) փողոցների ու մայթերի կառուցում/ վերակառուցում, հիմնանորոգում, բետոնե սալիկներով սալարկում, խճապատում՝ համալիր բարեկարգման միջոցառումների ու տարրերի կիրառմամբ 25-45%	Ծրագիր չի ներկայացվել		

Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/ նորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերում 70-80%	1 ծրագիր	Մեծամոր համայնքի Մեծամոր քաղաքի թիվ 3, Տանձուտ և Տարոնիկ բնակավայրերի մանկապարտեզների շենքերի հարակից տարածքների բարեկարգում, Երասխահուն բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում և հարակից տարածքի բարեկարգում, Ակնալիճ բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում, Ջանֆիդա գյուղի «Վազգեն Սարգսյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ջեռուցում	Նախկին՝ 70-80%
Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի	2 ծրագիր	1. Մեծամոր համայնքի Մեծամորի մշակույթի տան մեծ դահլիճի վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում և կահավորում, Մրգաշատ բնակավայրի մշակույթի տան շենքի	Նախկին՝ 35-60%

ձեռքբերում 35-60%		հիմնանորոգում, Ալաշկերտ բնակավայրի մշակույթի տան քանդում և նոր շենքի կառուցում, 2. Բաղրամյան համայնքի Դալարիկ բնակավայրի մշակույթի տան տանիքի հիմնանորոգում և շենքի ուժեղացում, Հուշակերտ բնակավայրի մշակույթի տան առաջին հարկի վերանորոգում և շենքի ուժեղացում	
<u>նոր ոլորտ՝</u> Աղբահանության ծառայությունների մատուցման համար մեքենասարքա-վորումների, տեխնիկայի և աղբամանների ձեռքբերում 50-65%	Ծրագիր չի ներկայացվել		Նախկին՝ 35-60% *Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում ոլորտ*
Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում, բացառությամբ աղբահանության ծառայության մատուցման համար անհրաժեշտ մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի	Ծրագիր չի ներկայացվել		Նախկին՝ 35-60%, *Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում ոլորտ*

35-60%			

❖ **4) որոշման N 2 հավելվածի 24.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

24.2. Ազգային փոքրամասնություններով բնակեցված մինչև 100,0 մլն դրամ համայնքային բյուջե ունեցող համայնքների դեպքում յուրաքանչյուր ծրագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինն ավելանում է 15 տոկոսով:

Ֆերիկ համայնքը 2024թ. սուբվենցիոն հայտ չի ներկայացրել, առաջարկվում է՝ այս փոփոխությունների հիման վրա, համայնքի առաջնահերթությունները և ֆինանսական հնարավորությունները հաշվի առնելով 2024թ. ընթացքում ներկայացնել սուբվենցիոն հայտ/հայտեր՝ արդեն 2025թ. սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացնելու համար:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշված օրակարգային հարցի քննարկման արդյունքներով հանձնարարեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին՝ շարունակական, հետևողական և վերահսկողական աշխատանքներ տանել 2024 թվական տեղափոխված 2022-2023թթ. հաստատված և շինարարական աշխատանքները չավարտված կամ չսկսված, ինչպես նաև հաստատված 2024թ. սուբվենցիոն ծրագրերի և ենթածրագրերի կատարման ուղղությամբ:

Օրակարգային << **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից օրենքով սահմանված կարգով Արմավիրի մարզպետի աշխատակազմում և մարզի համայնքապետարաններում պետական բյուջեից տրամադրված բյուջետային միջոցների նկատմամբ ֆինանսական, այդ թվում ստուգումների միջոցով անհրաժեշտ վերահսկողության կազմակերպման արդյունքների մասին** >> վեցերորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության

պետ Աշոտ Հովհաննիսյանը, որն իր զեկուցմամբ նշեց, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2023թ. հուլիսի 27-ի N 18-Ա հանձնարարագրի համաձայն, ֆինանսաբյուջետային վերահսկողության վարչության կողմից, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով հինգ համայնքներում /Մեծամոր, Բաղրամյան, Արաքս, Խոյ և Փարաքար/ իրականացվել է 2020-2022թթ. և 2023թ. 1-ին կիսամյակի ընթացքում՝ սուբվենցիոն ծրագրերով իրականացված շինարարական աշխատանքների փաստացի ծավալների չափագրման և տեղազննման, շինարարական աշխատանքների վերաբերյալ կնքված պայմանագրերի կատարման ճշտության ընտրանքային ստուգում, ընտրության առաջնահերթությունը տալով շենքերի կառուցման և վերանորոգման շինարարական աշխատանքներին: Նա մասնավորապես նշեց, որ «Տարածքային զարգացում» և «Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդ» բյուջետային ծրագրերի «Հայաստանի Հանրապետության մարզերին սուբվենցիաների տրամադրում՝ ենթակառուցվածքների զարգացման նպատակով» միջոցառման շրջանակում թվով 5 համայնքապետարաններում իրականացված հանդիպակաց ստուգումների արդյունքում՝ արձանագրվել է 56,410.7 հազ. դրամի խախտումներ: Այսպես՝

1. Մեծամորի համայնքապետարանում ստուգման ենթարկված թվով 6 ծրագրերի գծով՝ 11,145.6 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ՝ 2,139.6 հազ. դրամ, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգման ենթակա 1,194.5 հազ. դրամ գումարից վերականգնվել է ընդամենը 12.0 հազ. դրամ գումար, իսկ 1,182.5 հազ. դրամ գումարը ենթակա է վերականգնման, և համայնքային բյուջե վերականգման ենթակա 945.1 հազ. դրամ գումարից վերականգնվել է ընդամենը 12.0 հազ. դրամ գումար, իսկ 933.1 հազ. դրամ ենթակա է վերականգնման, և փաստաթղթային ստուգմամբ՝ 9,006.0 հազ դրամ, որից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգման ենթակա 4,446.9 հազ. դրամ գումարից վերականգնվել է ընդամենը 108.4 հազ. դրամ գումար, իսկ 4,338.5 հազ. դրամ գումարը ենթակա է վերականգնման, և համայնքային բյուջե վերականգման ենթակա 4,559.1 հազ. դրամ գումարից վերականգնվել է ընդամենը 108.4 հազ. դրամ գումար, իսկ 4,450.7 հազ. դրամ ենթակա է վերականգնման:

2. Արաքսի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված թվով 4 ծրագրերի գծով արձանագրվել է

6,914.7 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 4,057.4 հազ դրամի խախտումներ, որից 2,153.8 հազ. դրամը ենթակա է վերականգման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 1,903.6 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 2,857.3 հազ դրամ, որից 1,287.9 հազ. դրամը ենթակա է վերականգման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 1,569.4 հազ. դրամը՝ համայնքային բյուջե:

3. Խոյի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված թվով 3 ծրագրերի գծով արձանագրվել է 1,615.4 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 470.0 հազ դրամի խախտումներ, որից 141.0 հազ. դրամը ենթակա է վերականգման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 329.0 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 1,145.4 հազ դրամ, որից 164.5 հազ. դրամը ենթակա է վերականգման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 980.9 հազ. դրամը՝ համայնքային բյուջե:

4. Փարաքարի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով ստուգման ենթարկված թվով 4 ծրագրերից թվով 3-ի գծով արձանագրվել է 36,735.0 հազ. դրամի խախտումներ, այդ թվում՝ հսկիչ չափագրմամբ արձանագրվել է 5,402.0 հազ դրամի խախտումներ, որից 2,428.6 հազ. դրամը ենթակա է վերականգման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 2,973.4 հազ. դրամը՝ համայնքային բյուջե, փաստաթղթային ստուգմամբ՝ 31,333.0 հազ. դրամ, որից չվերականգնվող գումար՝ ընդամենը 27,728.8 հազ. դրամ, իսկ 3,604.2 հազ. դրամը՝ վերականգնման ենթակա գումար, այդ թվում 1,952.1 հազ. դրամը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ 1,652.1 հազ. դրամը՝ համայնքային բյուջե:

5. Բաղրամյանի համայնքապետարանին հատկացված գումարների ծախսման ճշտության ստուգման արդյունքներով խախտումներ չեն հայտնաբերվել:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշված օրակարգային հարցի քննարկման արդյունքներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր, Արաքս, Խոյ և Փարաքար համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

ա/ գործուն միջոցներ ձեռնարկել հանդիպակաց ստուգման ակտերով արձանագրված խախտումներն ու բացթողումները վերացնելու և հետագայում բացառելու ուղղությամբ, որակյալ խորհրդատվություն ստանալու նպատակով համագործակցելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ,

բ/ յուրաքանչյուր ծրագրի գծով կոնկրետ նախագծող, տեխնիկական, հեղինակային հսկողություն իրականացնող և կապալառու կազմակերպությունների հետ քննարկել արձանագրված խախտման փաստերը և համապատասխան միջոցներ ձեռնարկել արձանագրված գումարները Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներ վերականգնման ուղղությամբ,

գ/ այսուհետ խստորեն պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանին՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարների հետ համատեղ խիստ հսկողություն սահմանել տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ աշխատանքների ծավալային հավելագրումների և անորակ աշխատանքների փաստեր,

- խիստ հսկողություն սահմանել հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթների պատշաճ կատարման նկատմամբ, թույլ չտալ օրենքով սահմանված չափերից ավելի նախագծային փոփոխությունների և ծավալային համադրումների փաստեր:

Օրակարգային << **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում 2023 թվականի ընթացքում ոռոգման համակարգերը սպասարկող ընկերությունների կողմից կատարված աշխատանքների, հիմնախնդիրների և գյուղատնտեսական մթերքների /խաղող, պտուղ–բանջարեղեն/ մթերումների արդյունքների մասին** >> յոթերորդ հարցի

կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը, որն իր զեկուցմամբ նշեց, որ արհեստական ոռոգվող երկրագործության տարածք համարվող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում, ոռոգման համակարգերի կառուցումը, պահպանումը և արդյունավետ շահագործումը մշտապես գտնվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի և Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում: Նա միաժամանակ նշեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության «Հիդրոօդերեվութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ–ի կանխատեսումների 2023 թվականին մարզը սնուցող ջրամբարների լցվածությունը կազմելու էր 65-70 տոկոս, իսկ գետերում հոսքի առավելագույն ելքերի մեծությունը սպասվում էր 50-70 տոկոսի սահմաններում: Հիմք ընդունելով ներկայացված կանխատեսումների տվյալները սպասվում էր սակավաջուր տարի, որը ջրօգտագործողների ընկերություններից և ջրօգտագործողներից պահանջում էր մեծ ջանքեր և լրացուցիչ ֆինանսական միջոցներ: Սակավաջրության ռիսկերը մեղմելու նպատակով մարզը սպասարկող 3 ջրօգտագործողների ընկերությունները ոռոգման ջրի մատակարարման իրենց տարեկան պլանները կրճատել են մինչև 30 տոկոսով և այդ ծավալներին համապատասխան «Ջրառ» ՓԲԸ–ի հետ կնքել են ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր՝ ըստ ամիսների և ըստ տասնօրյակների: Ջրօգտագործողների ընկերությունները ելնելով փաստացի մատակարարված ծավալներից տարածքում իրականացրել են ջրաշրջանառություն ըստ ջրանցքների և բնակավայրերի՝ նախապես տեղեկացնելով ջրօգտագործողներին: 2023թվականի ընթացքում ջրաղբյուրներում կանխատեսվող ջրի դիֆիցիտը մասամբ լրացնելու նպատակով «ՋՕԸ» -ների կողմից Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտե է ներկայացվել առաջարկություններ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ.

Մասնավորապես՝

- «Էջմիածին» ՋՕԸ–ի կողմից շահագործվող խորքային հորերից թվով 67-ը միջին 16 ժամի փոխարեն 24 ժամով 120 օր աշխատացնելու և շահագործվող 17 խորքային հորերի պոմպերի փոխարինման դեպքում հավելյալ կարտադրվի 11,46 մլն մ^3 ջրաքանակ և հավելյալ կծախսվի շուրջ 182,6 մլն դրամի էլ.էներգիա:

–«Արմավիր» ՋՕԸ կողմից շահագործվող 10 խորքային հորերի պոմպերի փոխարինման, գործող դոտացիոն խորքային հորերը 24 ժամ , 100 օր աշխատելու դեպքում և ընկերության կողմից այժմ չշահագործվող 25 խորքային հորերը 100 օր ոռոգման նպատակով աշխատացնելու դեպքում լրացուցիչ կարտադրվի 15,84մլն մ^3 ոռոգման ջուր, որի համար լրացուցիչ կծախսվի 221,76 մլն դրամի էլ.էներգիա:

–«Շենիկ» ՋՕԸ կողմից ներկայացվել է մայր ջրանցքի վերջնամասում գտնվող գյուղերի խորքային հորերի վերականգնման աշխատանքները՝ մասնավորապես Մյասնիկյանի «Ֆերդինի հոր», «Գոմեր», «Իլյայի Արթուրի հոր», Արտամետի «Ջիվանի», Տալվորիկի «Հուշաքար» կոչվող խորքային հորերի հորատանցքի խորացման աշխատանքները:

Բոլոր ընկերությունների կողմից ուժեղացվել է հսկողությունը ջրի բաշխման և կառավարման աշխատանքների իրականացման վրա, ակտիվացել է բացատրական և տեղեկատվական աշխատանքները ջրօգտագործողների շրջանում՝ հատկապես մեծ ուշադրություն դարձնելով գիշերային ջրումներին:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 28.02.2023թ. թիվ ՄՈ/67-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որն ուսումնասիրել է մարզի ոռոգման համակարգերի նախապատրաստական աշխատանքները, ստուգել է մաքրման և վերանորոգման աշխատանքների վիճակն ըստ բնակավայրերի: Արդյունքում 233,3կմ միջտնտեսային, 4981,2կմ ներտնտեսային ցանցերը, 335 խորքային հորերը, 64 պոմպակայանները պատրաստ են եղել ոռոգման սեզոնին, որն սկսվել է ապրիլի 14-ից: Կատարված աշխատանքների և ձեռնարկված միջոցառումների շնորհիվ հնարավոր դարձավ ոչ էական կորուստներով ավարտին հասցնել ոռոգման սեզոնը՝ 2035 ջրօգտագործողներին մատակարարելով 281,1 մլն մ^3 ոռոգման ջուր 3,03 մլրդ դրամ հասույթով: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ոռոգման ջրի սակավության և բացակայության պատճառով չի մշակվում շուրջ 10916 հեկտար հողատարածություն: Այդ հողատարածությունները գյուղատնտեսական արտադրության մեջ ներառելու նպատակով անհրաժեշտ է հորատել 35 և վերանորոգել 48 խորքային հորեր,կառուցել 6 պոմպակայաններ և հիմնանորոգել 18,3 կմ միջտնտեսային և 141,9 կմ երկարության ներտնտեսային ցանցեր, որոնց նախնական արժեքը կազմում է շուրջ 13,7 մլրդ դրամ:

Ճիշտ է նախորդ տարիներին համայնքների սուբվենցիոն ծրագրերով իրականացվել են ոռոգման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ, սակայն իրավիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց, քանի որ այս բնագավառում ներդրումները պետք է լինեն մշտական և կանոնավոր:

Անդրադառնալով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գյուղատնտեսական մթերքների /խաղող, պտուղ–բանջարեղեն/ մթերումների արդյունքներին, նա ընդհանուր կարգով նշեց, որ 2023 թվականին մարզում տեղակայված թվով 15 կազմակերպությունների կողմից մթերվել է 85770 տոննա գյուղատնտեսական մթերքներ՝ որից խաղող – 68445 տոննա: Բանջարեղեն 10541 տոննա, որից լոլիկ – 7381 տոննա և 6784 տոննա պտուղ:

Իրազեկման կարգով տեղեկացվեց նաև, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում խաղողի տարածությունները կազմում են 6941,97 հա, որից տեխնիկական 5044,3 հեկտար, որից բերքատու հասակի 4941,07 հեկտար: 2023 թ կանխատեսվում էր ստանալ 70-72 հազար տոննա տեխնիկական խաղողի բերք: Խաղողի մթերման գործընթացում հստակեցում մտցնելու նպատակով հավաքագրվել է տեղեկատվություն խաղողի մթերման ենթակա մնացորդային քանակությունների վերաբերյալ, որն իր մեջ ընդգրկել է խաղողագործների անվանական ցանկը, խաղողի մշակվող տարածության չափը, տեղակայման վայրը, սորտը և մթերման ենթակա խաղողի քանակը: Համաձայն հավաքագրված տվյալների մթերման ենթակա խաղողի քանակությունը կազմել է 40440 տոննա, որը պատկանում է թվով 2335 խաղողագործների: Հավաքագրված տեղեկատվությունը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 07.09.2023 թվականի N 1520–Լ որոշմամբ հաստատվել է 2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները, որով սահմանվում է, որ խաղողի մթերումներն իրականացվում են մարզպետների կողմից հաստատված ցանկերով ներկայացված խաղողագործներից, իսկ մթերվող խաղողի 1 կգ–ի նվազագույն գինը կազմել է 110 դրամ: Խաղողի մթերման աշխատանքները համակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որը

համապատասխան ընթացակարգով մշտադիտարկում է իրականացրել խաղողի մթերում իրականացնող կազմակերպություններում: Ներդրված ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ մթերել խաղողի արտադրված ողջ բերքը: Միաժամանակ տեղեկացվեց, որ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 2473-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի դեկտեմբերի 8-ի թիվ 774-Լ և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի նոյեմբերի 29-ի թիվ 345-Լ որոշումներով հաստատված 2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումներից օգտվելու և 6000 տոննայից մինչև 9000 տոննան ներառյալ և 15000 տոննա և ավելի խաղողի մթերումներ իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին սուբսիդավորման տրամադրման ընթացակարգով նախատեսված միջոցառումները մեր կողմից կատարվել են լիարժեք և ամբողջությամբ:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը նշված օրակարգային հարցի քննարկման արդյունքներով, անդրադառնալով ոռոգման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց հնարավորության սահմաններում մեծացնել սուբվենցիոն ծրագրերում ոռոգման համակարգերի կառուցման և վերանորոգման աշխատանքների ծավալները:

Այնուհետև, հայտարարություններով հանդես եկան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը և քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանն իր հայտարարությամբ անդրադարձավ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառում իրականացնելու խնդրին, մասնավորապես նշելով, որ յուրաքանչյուր տարվա հունվարի 1-15-ը ընկած ժամանակահատվածում համայնքներում պարտադիր կարգով իրականացվում է բոլոր տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա գյուղատնտեսական կենդանիների

համատարած հաշվառման աշխատանքներ: Իրականացվելիք հաշվառման աշխատանքները կազմակերպված և արդյունավետ անցկացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ /ՄՈ 778-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, որի աշխատանքներին մասնակցում են բոլոր համայնքների ղեկավարները:

Անդրադառնալով ներկայացված հայտարարությանը և կարևորելով դրա նշանակությունը նաև սպանդանոցային մորթի ճիշտ կառավարման գործընթացում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

1. հարցի կարգավորման նպատակով համայնքներում ստեղծել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումն իրականացնող և կազմակերպող համայնքային հանձնաժողովներ, որի կազմում պարտադիր ընդգրկելով տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին,
2. հաշվառման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է ազգային վիճակագրական ծառայության մարզային գործակալության տարածքային ստորաբաժանումներից վերցնել սկզբնական հաշվառման փաստաթղթերը, հունվարի 1-15-ը ընկած ժամանակահատվածում ճշգրիտ իրականացնել կենդանիների հաշվառումը և ոչ ուշ մինչև 2024 թվականի հունվարի 15-ը ամփոփ հաշվետվությունը ներկայացնել վիճակագրական ծառայությանը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Աշոտ Հովհաննիսյանն իր հայտարարությամբ անդրադարձավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում աղբահանության և սանիտարական մաքրության կազմակերպման որակին, նշելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում կանոնավոր աղբահանությունն իրականացվում է համայնքների կողմից մշակված սխեմաների և աղբահանության օրացուցային գրաֆիկի հիման վրա: Մարզի քաղաքային և մի շարք գյուղական բնակավայրերում աղբահանությունը կատարվում է պայմանագրային սկզբունքով: Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հանձնարարությամբ 2018-2023 թթ. ընթացքում իրականացվել են անօրինական աղբավայրերի մաքրման և փակման աշխատանքներ, որն հիմնականում իրականացվել է

կազմակերպված շաբաթօրյակների միջոցով: Ներկայումս Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում անօրինական աղբավայրեր առկա չեն:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում աղբահանությունը կատարվում է մի շարք կազմակերպությունների միջոցով, օրինակ՝ Փարաքար, Արաքս, Մեծամոր, ինչպես նաև Արմավիր համայնքի 9 բնակավայրերի աղբահանությունը կատարվում է «Մաքրություն» ՍՊԸ-ի միջոցով, Խոյ համայնքի 14 բնակավայրերի աղբահանությունը կատարվում է «Սերոբ Ներսիսյան» Ա/Ձ–ի կողմից, իսկ Արմավիր և Էջմիածին քաղաքների մասով՝ աղբահանություն իրականացվում է Արմավիրի և Վաղարշապատի համայնքների «Բարեկարգում» տնօրինությունների միջոցով:

Նա նշեց նաև, որ վերջին 2 տարիների ընթացքում Արմավիրի մարզում համայնքների աղբահանության և սանիտարական մաքրության կազմակերպման որակը բարձրացել մի քանի անգամ, սակայն աղբահանության վճար վճարող ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի /2022թվականին կնքված է եղել 1991 պայմանագիր, իսկ 2023թվականին 1962 պայմանագիր/ և աղբահանության վարձավճարների հավաքագրումները դեռևս չեն հասել ցանկալի ցուցանիշների:

Անդրադառնալով ներկայացված հայտարարությանը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների պատշաճ մակարդակով իրականացման, սանիտարահիգենիկ իրավիճակի բարելավման, աղբահանության վարձավճարների կատարողական ցուցանիշների բարձրացման, աղբահանության ծախսերի և եկամուտների հստակ հավաքագրումն ապահովման նպատակով, համայնքների ղեկավարներին առաջարկեց՝ խստացնել հսկողությունը աղբահանության, վարձավճարների հավաքագրման, իրավաբանական անձանց հետ պայմանագրերի կնքման և աղբավայրերում հակահրդեհային միջոցառումների պատշաճ իրականացնման համար:

2. մշտական վերահսկողություն իրականացնել, ինչպես, համապատասխան կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների պայմանագրերով ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու, այնպես էլ համայնքների կողմից իրականացվող աղբահանության աշխատանքների որակի նկատմամբ:

Այնուհետև, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանն իր ամփոփիչ ելույթով հատուկ շնորհակալություն հայտնեց Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ Արթուր Բդոյանին, Հայաստանի Հանրապետության ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության պետ Ռաֆիկ Բոխյանին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանին, ինչպես նաև մարզի տարածքում գործող մյուս բոլոր կազմակերպությունների ղեկավարներին և նրանց աշխատակիցներին, ովքեր արդյունավետ համագործակցությամբ և օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում ակտիվ մասնակցություն են ունեցել 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի նշանակալի ձեռքբերումների ապահովման գործընթացում:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը միաժամանակ շնորհավորեց բոլորին գալիք Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով՝ մաղթելով առողջություն, տոկունություն և հետագա հաջողություններ աշխատանքում ի փառս Հայաստանի Հանրապետության անվտանգության և խաղաղության:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների քննարկմամբ և ամփոփմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

Հայաստանի Հանրապետության

Недействительная подпись

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Արմավիրի մարզպետ՝

Էդվարդ Հովհաննիսյան

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝Դավիթ Դավթյան